Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն 2.

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2024 թ. հուլիսի 31

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Տաթևիկ Ստեփանյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ
Արմեն Գասպարյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Ժաննա Հակոբյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության պետ
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն
Լուսինե Սիմոնյան	Մանկական զարգացման հիմնադրամի տնօրեն
Արթուր Կեսոյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետ
Կարինե Բաղալյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հավասար հնարավորությունների ապահովման վարչության Երեխաների հմնահարցերի բաժնի պետի պարտականությունները կատարող (Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող)

Նիստին մասնակցում էին հրավիրյալներ՝

Հերիքնազ Տիգրանյան	ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Զարուհի Բաթոյան	ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ
Գայանե Եղիազարյան	ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ
Մարիամ Պողոսյան	ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ
Դավիթ Ասատրյան	ՀՀ ԱԺ պատգամավոր, ՄԻՊ և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի քարտուղարության փորձագետ
Լիլիթ Ազատյան	ՀՀ վարչապետի աշխատակազմ
Անդրանիկ Շահբազյան	ՀՀ գլխավոր դատախազություն
Մերի Հովսեփյան	ՀՀ պաշտպանության նախարարություն
Արսեն Այվազյան	ՀՀ քննչական կոմիտեի նախագահի տեղակալ
Կարեն Թովմասյան	ՀՀ ֆինանսների նախարարություն
Արմինե Անտոնյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Սոսե Ստեփանյան	ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Վահրամ Հովհաննիսյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն
Զարուհի Մանուչարյան	ԱՍՀՆ մամուլի քարտուղար
Արմինե Գյոզալյան	ՀՀ ՆԳՆ ոստիկանության պետի տեղակալի փոխարեն
Լիլիթ Մարտիրոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Անահիտ Մուրադյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ
Վանանդ Կարապետյան	ՀՀ ԱՍՀՆ «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող
Աննա Սիմոնյան	ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն
Հրանտ Սարկիսով	Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով

Հրանտ Ներսիսյան	Մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչություն
Լիլիթ Ավետիսյան	ՀՀ առողջապահության նախարարության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ
Զառա Ասլանյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության երիտասարդության հարցերի վարչության պետ
Անի Խաչատրյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հանրակրթության վարչության գլխավոր մասնագետ
Աշխեն Կարապետյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ռազմավարական պլանավորման և մոնիթորինգի վարչության ավագ մասնագետ
Արտյոմ Սեդրակյան	ԵԽ գրասենյակ
Նանա Սկաու	ՄԱԿ-ի պարենի համաշխարհային ծրագրի ՊՀԾ ներկայացուցիչ և տնօրեն
Մարիա Հարությունյան	Acted Armenia
Քրիստինե Վայգանդ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ
Հայկ Խեմչյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Աննա Թադևոսյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Վիկտորիա Օհանյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Աստղիկ Մարտիրոսյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի երեխայի իրավունքների մշտադիտարկման և գնահատման բաժնի ղեկավար
Զառա Սարգսյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Իվետա Շահբազյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Անահիտ Հովհաննիսյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Դավիթ Դադալյան	ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցիչ
Ռաֆֆի Դուդակլյան	Վորլդ Վիժն Հայաստան
Հասմիկ Խաչատրյան	Հայկական Կարմիր խաչ
Արմեն Չոբանյան	Իզմիրլյան հիմնադրամ
Անաստաս Աղազարյան	Պրիզմա ՍՊԸ
Գրիգորի Գրիգորյանց	Պրիզմա ՍՊԸ
Գայանե Հովակիմյան	Մանկական զարգացման հիմնադրամ

Լիլյա Սարգսյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ

Հանձնաժողովի նիստը մեկնարկեց օրակարգի համաձայն: Նիստը վարում էր Հանձնաժողովի նախագահ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը:

1. Հանձնաժողովի նիստին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Ն. Մկրտչյանը:

Նախարարը, ողջունեց նիստի մասնակիցներին, ներկայացրեց նիստի հրավիրման նպատակը՝ այն է 2024-2029 թթ Համալիր ծրագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ներկայացումը և Նախագծի շուրջ քննարկումը: Նախարարը մասնավորապես տեղեկացրեց, որ Նախագիծը ստեղծվել է տարբեր գերատեսչությունների, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, միջազգային և տեղական տարբեր կազմակերպությունների համագործակցության արդյունքում, Նախագծի ստեղծման գործում իրենց մասնակցությունն են ունեցել տարբեր սոցիալական խնդիրներ, կյանքի տարբեր դժվարին իրավիճակում գտնվող 60-ից ավելի երեխաներ: Նախագիծը, ի տարբերություն նախորդիվ ընդունված ռազմավարական ծրագրերի, միտված է նպաստավոր պայմաններ ապահովելու բոլոր երեխաների իրավունքների իրացման համար՝ ներառման, հավասարության և խտրականության բացառման սկզբունքների հիման վրա: Համալիր ծրագիրն անդրադառնում է հասարակական կյանքի բոլոր ոլորտներին՝ շեշտադրելով 0-18 տարեկան երեխաների իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները:

Փաստաթղթով սահմանվում է 3 հիմնական նպատակ, որոնցից յուրաքանչյուրի համար նշված են ակնկալվող արդյունքները: Համալիր ծրագրի բոլոր արդյունքները և միջոցառումները մշակված են երեխայակենտրոն սկզբունքների հիման վրա, դրանք սահմանում են երեխաների իրավունքների պաշտպանության առաջիկա տարիների տեսլականը և առանց բացառության ուղղված են բոլոր երեխաների իրավունքների

պաշտպանության և բոլոր երեխաների համար հավասար հնարավորությունների ապահովմանը:

Նախարարը մեկ անգամ ևս կարևորեց տարբեր գերատեսչությունների և շահեկից մարմինների և ոլորտում գործունեություն իրականացնող կառույցների հետ ակտիվ համագործակցությունը:

Բացման խոսքով հանդես եկավ նաև ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Քրիստինե Վայգանդը, որը, ողջունելով նիստի մասնակիցներին, իր խոսքում մատնանշեց նաև այն կարևոր ժամանակահատվածը, որի ընթացքում ընդունվում է Համալիր ծրագիրը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սեպտեմբերի 4-5-ը Ժնևում ՀՀ ներկայացնելու է 2013 և 2023 թթ 4-րդ և 5-րդ պարբերական զեկույցները:

Ողջույնի խոսքով հանդես եկան ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը: Վերջինս մասնավորապես ներկայացրեց Նախագծի բազմաշահառու քննարկման կարևորությունը, տեղեկացրեց, որ Ազգային ժողովը պատրաստակամ է աջակցելու նախագծի իրականացմանը՝ հատկապես իրավական դաշտի փոփոխությունների առումով:

Կարևորելով իրավական նորմերի ընդունումն ի շահ երեխաների՝ Հ. Տիգրանյանը նախագծի առավելություններից ներկայացրեց երեխաներին ընձեռնվող այն հնարավորությունը, երբ երեխան մասնակից է դառնում իր վերաբերյալ ընդունվող որոշումներին: Անդրադառնալով Նախագծին նա տեղեկացրեց, որ այն արդյունքահեն Նախագիծ է և առկա են իրականանալի գործողություններ, կարևորեց երեխաների մասնակցությունն իրենց վերաբերելի որոշումների ընդունման հարցում:

2. Հանձնաժողովի անդամ ԱՍՀՆ նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ներկայացրեց 2024-2029 թթ երեխաների իրավունքների պաշտպանության Համալիր ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) տեսլականը, նպատակը, խնդիրները, կառուցվածքը: Մասնավորապես, կարևորելով Ծրագրի ընդուման ժամանակահատվածը Ժնևում սեպտեմբերին ներկայացվելիք պարբերական զեկույցի առումով, ինչպես նաև արձանագրելով այն փաստը, որ ՄԻՊ-ի գործընկերների հետ Ժնևում իրականացված սեսիաներին արդեն իսկ իրենց ձայնը լսելի են դարձրել ՄԻՊ-ին առընթեր երեխաների խորհրդի կազմում գտնվող երեխաները, Տ. Ստեփանյանը կրկին անգամ շեշտեց այն կարևոր փաստը, որ Նախագծի ձևավորման ընթացքում իրենց վերաբերելի միջոցառումների մշակման գործում մասնակից են եղել

տարբեր խմբերում ներառված ՀՀ շուրջ 748300 երեխաների ներկայացուցիչներ: Զեկուցողի կողմից ողջույն հղվեց նաև գործընկեր կազմակերպություններին, որոնց աջակցությամբ ստեղծվել է Նախագիծը: Կարևորվեց այն հանգամանքը, որ ի տարբերություն նախորդ՝ 2017-2023 թթ Համալիր ծրագրի, որը ներկայացնում էր միայն ԿԴԻՀ երեխաների շահերը, սույն Ծրագիրը ներկայացնում է բոլոր երեխաների շահերը՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարության հնգամյա 2021-2026 թթ գործունեության միջոցառումների ծրագիրը, և ուղղված է ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների և մի շարք կոնվենցիաներով ստանձնած նպատակների իրագործմանը: Նախագիծը մշակվել է իրավիճակային վերլուծությունների համադրումների և խնդիրների դուրս բերման արդյունքում: Ծրագրում սահմանվել են 69 հիմնախնդիրներ, որոնք ներկայացված են երեք խոշոր խնդիրների տեսքով: Ծրագրում ներառված են 94 միջոցառումներ և համապատասխանաբար 142 ակնկալվող արդյունք: Ներկայացվեց նաև արդյունքների ֆինանսավորման հնարավոր տարբերակները՝ ՀՀ բյուջեից և օրենքով չարգելվող այլ աղբյուրներից: Տ. Ստեփանյանը նշեց, որ Ծրագրի ստեղծմանը մասնակցություն են ունեցել 25-ից ավել ոլորտային կազմակերպություններ, պետական գերատեսչություններից 30-ից ավել ներկայացուցիչներ, ինչպես նաև տարբեր տարիքային և սոցիալական խմբերի շուրջ 60 երեխաներ, որոնց հետ անցկացված հարցազրույցները գնահատվել են շատ արդյունավետ, երեխաների վերհանած խնդիրները 99 տոկոսով համընկել են հետազոտական մեթոդներով վերհանված խնդիրների հետ: Անդրադառնալով Ծրագրի սկզբունքներին՝ Տ. Ստեփանյանը կարևորեց այն սկզբունքը, որ երեխաների վերաբերյալ ցանկացած որոշում կայացնելիս պետք է դիտարկվի երեխայի շահն ապահովելու կարևորությունն անկախ ոլորտից, երեխաներին տրամադրվող ծառայությունների մատչելիության, հասանելիության ապահովումը և հասցեականությունը, երեխաների գործուն և իմաստավորված մասնակցությունը, սեփական կարծիքն ազատորեն արտահայտելու իրավունքի ապահովումը իրենց վերաբերող բոլոր դեպքերում, սեռի, տարիքի, էթնիկ ծագման կամ կյանքի դժվարին իրավիճակի որևէ հատկանիշով պայմանավորված խտրականության բացառումը և հավասար հնարավորությունների ապահովումը, երեխայի կյանքի ու զարգացման իրավունքի իրացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, երեխայի պաշտպանության հարցում բոլոր շահագրգիռ կողմերի երեխայակենտրոն և երեխայազգայուն միասնական մոտեցման և փախհամագործակցության, ինչպես նաև միջգերատեսչական մակարդակում մշտադիտարկման և հաշվետվողականության գործուն

համակարգի ապահովումը: Ծրագիրը սահմանում է հիմնախնդիրները և դրանց լուծման փոփոխությունների տեսությունն ու ճանապարհային քարտեզը՝ նպատակների, ուղղակի արդյունքների, վերջնարդյունքների, ցուցիչների, միջոցառումների և տարեկան թիրախների միջոցով, որոնց համար սահմանված են կատարող և համակատարող գերատեսչությունները, գնահատված են ծախսերը և նշված են ֆինանսավորման աղբյուրները, ծրագրի նպատակների և արդյունքների սահմանման հաշվի են առնված առնվազն 39 իրավական ակտ և ռազմվարական փաստաթուղթ: Ծրագրի տեսլականը՝ այն է ապահովել մարդկային կապիտալի զարգացման և իրավունքների իրացման նպաստավոր պայմաններ և հավասար հնարավորություններ բոլոր երեխաների համար, համընդհանուր ՀՀ կառավարության տեսլականն է և միայն ՀՀ ԱՍՀ նախարարության տեսլականը չէ: Տեսլականը ներկայացված է 3 նպատակների տեսքով, որոնք են.

1. բոլոր երեխաների համար անվտանգ և ապահով միջավայրում ապրելու և զարգանալու հնարավորության ապահովում,
2. հավասար հնարավորությունների ապահովում և երեխաների սոցիալական ընդգրկման խթանում,
3. երեխաների իրավունքների պաշտպանության համակարգի արդյունավետության բարելավում:

Յուրաքանչյուր նպատակ ենթադրում է որոշակի թվով ուղղակի արդյունքներ:

Նպատակ 3-ի ուղղակի արդյունքներն են՝ Երեխայի իրավունքների պաշտպանության համայնքահենք և կանխարգելիչ գործառույթների հզորացումը, երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտային պատասխանատուների դերերի հստակ բաշխվածության և համագործակցության ապահովումը, Երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում հաշվետվողականության և որոշումների փաստահենքության ապահովումը, առանց որի իրականացման հնարավոր չէ խոսել Համալիր ծրագրի իրականացման մասին: Տ. Ստեփանյանը ներկայացրեց նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգի անկատար լինելը և կարևորեց տարբեր տեղեկատվական համակարգերի հետ փոխգործելի նոր համակարգի ստեղծման հրատապությունը:

Նպատակ 1-ի ակնկալվող հիմնական փոփոխություններն են լինելու՝ մինչև 2026 թվականը առցանց անվտանգությանն ուղղված օրենսդրական կարգավորումներում և չափորոշիչներում

երեխայակենտրոն դրույթների ներառումը առցանց միջավայրի՝ երեխաների համար անվտանգ դարձնելը, մինչև 2029 թվականը երեխաների նկատմամբ իրականացված հանցագործությունների՝ այդ թվում բռնության դեպքերի նվազում առնվազն 50 տոկոսով, բուլինգի և երեխաների միջև բռնության տարածվածության նվազում՝ շուրջ 40 տոկոսով, մարմնական պատժի արգելում ամենուր և բոլորի կողմից և այլ փոփոխություններ:

Նպատակ 2-ի ակնկալվող փոփոխություններն են՝ երկու պետական հաստատության ապաինստիտուցիոնալացումը, մասնագիտական, ճգնաժամային և արձակուրդային խնամատարության աճը մինչև 200 ընտանիք, 10 ցերեկային կենտրոնների վերազինում հաշմանդամություն ունեցող երեխաներին որակյալ ծառայություններ տրամադրելու նպատակով՝ խթանելով ապաինստիտուցիոնալացումը, համայնքահենք պատվիրակված նոր ծառայությունների ներդնում՝ առողջական խնդիրներ ունեցող երեխաների՝ ընտանիքից բաժանումը կանխելու կամ ընտանիքի հետ վերամիավորումն ապահովելու նպատակով, ինչպես նաև մինչև 2029 թվականը ԿԴԻՀ երեխաների և նրանց ընտանիքների համար կարիքահենք 4 նոր ծառայությունների ներդրում:

Նպատակ 3-ի ակնկալվող հիմնական փոփոխություններն են՝ կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների մասին տեղեկատվությունը հավաքագրելու և վերլուծելու նոր տեղեկատվական համակարգի ներդրում մինչև 2027 թվականը, բոլոր մարզերում և Երևանում ԵՊ բազմամասնագիտական խորհուրդների ստեղծում, մինչև 2028 թվականը երեխային առնչվող տվյալների համադրելիության ապահովում՝ առնվազն 4 բազաների փոխգործելիությամբ, տարաբնույթ իրազեկման ակցիաների և վերապատրաստումների ապահովում:

3. Օրակարգի «Հարց և պատասխան» կետն անցավ քննարկումների տեսքով: Հարցերով հանդես եկան ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ Զարուհի Բաթոյանը, հանձնաժողովի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության պետ Ժ. Հակոբյանը, ԿԳՄՍՆ ներայացուցիչը, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Որոշվեց

Առանձին կառույցների հետ ըստ անհարժեշտության կազմակերպել լրացուցիչ հանդիպում-քննարկումներ՝ Համալիր ծրագրում տարբեր գերատեսչություններին վերապահված կատարվելիք բոլոր գործողությունների հետ կապված հարցերը հստակեցնելու նպատակով:

4. Նիստը ամփոփեց Երեխաների իրավունքների պաշտպանության հանձնաժողովի նախագահ, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, որը կրկին շնորհակալություն հայտնեց ներկաներին մասնակցության, դիտարկումների, առաջարկների համար և կարևորեց համագործակցային աշխատանքը՝ հիմքում ունենալով երեխայի լավագույն շահը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

Հանձնաժողովի քարտուղարի պարտականությունները կատարող՝ Կ. Բադալյան